# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 43

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Հաստատել 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը

- Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վայքի տարածքային բաժնի գործունեությունը դադարեցնելու, Վայք համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 8-ի N 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
- Վայք համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի N 8 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին.
- Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն և լրացում կատարելու համար Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին.
- Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի երրորդ եռամսյակի համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 44

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՅՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ և 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16–ի N 1531-Ն որոշմամբ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դադարեցնել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վայքի տարածքային բաժնի գործունեությունը:
2. Վայք համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 8-ի ««Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 38-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ դադարեցնել որոշմամբ հաստատված հավելվածի «78. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺԻՆ» գլխի գործողությունը և ճանաչել ուժը կորցրած:
3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետով «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ կատարված փոփոխությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 17-ից

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒԻՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 45**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Վայք համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 8 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- որոշմամբ հաստատված հավելված 1-ից հանել «Առանձնացված ստորաբաժանումներ»՝ «1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժին» հատվածը, «Ընդհամենը՝ թվաքանակ - 37» արտահայտության մեջ «37» թիվը փոխարինել «35» թվով,
- որոշմամբ հաստատված հավելված 1-ից հանել «ՔԿԱԳ Վայքի տարածքային բաժին» հաստիքացուցակ–հատվածը:
- <<Աշխատակազմ>> մասը լրացնել նոր տողով հետևյալ բովանդակությամբ՝

Առաջատար մասնագետ– ՔԿԱԳ սպասարկման կենտրոնի մասնագետ 1, 166600 դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում << Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարի կողմից Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում սույն որոշմամբ պայմանավորված փոփոխությունները կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 46**

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Դիմել Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 195-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ փոփոխությունը և լրացումը կատարելու համար՝
ա/ անվանացանկի համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի 1-ին կետը և համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախումբի 1-ին կետը հանել,
բ/ անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել նոր՝ 5-րդ կետով՝ «5․ աշխատակազմի առաջատար մասնագետ–ՔԿԱԳ սպասարկման կենտրոնի մասնագետ»։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարությանը օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 47

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ընդունել ի գիտություն Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը բյուջեի 2021 թվականի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված համայնքի ավագանու
07/10/2021թ. Թիվ N 47 որոշման

30.09.2021թ. դրությամբ

| Եկամտատեսակ | Նախատեսված /տարեկան/ | Նախատեսված /3-րդ եռամսյակ/ | Կատարողական /3-րդ եռամսյակ/ | Կատարման տոկոս եռամսյակային պլանի նկ. |
|---|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 8750,0 | 3655,0 | 3233,0 | 88,5 |
| Գույքահարկ | 44157,1 | 22000,0 | 22208,5 | 100,9 |
| Տեղական տուրքեր | 8480,0 | 5429,0 | 5408,9 | 99,6 |
| Ընդհամենը գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ | 12267,0 | 6610,0 | 6202,0 | 93,8 |
| Պետ. Բյ. ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ և նպ.սուբվենցիաններ | 206996,6 | 154059,9 | 154059,9 | 100,0 |
| Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 36200,0 | 24000,0 | 23033,7 | 96,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 316850,70 | 215753,9 | 214145,9 | 99,3 |

| Ծախսային մաս | Նախատեսված /տարեկան/ | Նախատեսված /3-րդ եռամսյակ/ | Կատարողական /3-րդ եռ/ | Կատարման տոկոս /3-րդ եռ |
|---|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 115784,4 | 80000,0 | 78114,7 | 97,6 |
| Էներգետիկ ծառայություններ | 4004,0 | 3100,0 | 3089,5 | 99,7 |
| Կոմունալ ծառայություններ | 140,0 | 50,0 | 48,6 | 97,2 |
| Կապի ծառայություններ | 1140,0 | 750,0 | 729,2 | 97,2 |
| Ապահովագրական ծախսեր | 200,0 | 200,0 | 187,0 | 93,5 |
| Գործուղումներ և շրջագայությունների ծախսեր | 300,0 | 200,0 | 134,6 | 67,3 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 16992,9 | 7580,0 | 6594,1 | 87,0 |
| Պարտադիր վճարներ | 1 113,0 | 713,0 | 608,1 | 85,3 |
| Դրամաշնորհներ | 177325,7 | 134309,3 | 134309,3 | 100,0 |
| Սոց, նպաստներ և կենսաթոշակներ | 1000,0 | 830,0 | 830,0 | 100,0 |
| Պահուստային միջոցներ | 10000,0 | 10000,0 | 0,0 | 0,0 |
| **Վարչականի ընդամենը ծախս** | **328000,0** | 237732,3 | 224645,1 | 94,5 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 58267,1 | 39850,0 | 5510,0 | 13,8 |
| Վարչ.սարք ,և այլ մեքենաների սարք, | 1816,7 | 1816,7 | 1255,0 | 69,1 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 3916,2 | 1638,2 | 1323,2 | 80,8 |
| **Ֆոնդային բյ. ընդամենը** | **64000** | 43304,9 | 8088,2 | 18,7 |

Վայք համայնքի ղեկավար՝ Թ. Ս. Ավետյան

Ֆին.բաժնի պետ՝ Ն. Հ. Հովհաննիսյան